ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 780 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 677-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ ապագա» ծրագրի մասին» N 677-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Այտեք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00894913) 2025 թվականի նոյեմբերի 11-ին կնքված՝ N 242/25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընկերակցության «Շին շողիկ» ճամբարի հյուրատան համար դռների փականների և կենցաղային սարքավորումների մատակարարում ու տեղադրում՝ 3,178,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2025 թվականի նոյեմբերի 11-ին կնքված՝ N 243/25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

ընկերակցության Վանաձորի Շող կենտրոնում նորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 22,743,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2025 թվականի նոյեմբերի 17-ին կնքված՝ N 251/25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընկերակցության «Շին շողիկ» ճամբարում շինարարական աշխատանքների իրականացում՝ 43,098,446 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

10.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ